DOI: https://doi.org/10.59630/25792644-2023.2.25-139

ԹԱՅՎԱՆԻ ԽՆԴԻՐԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԱՄՆ-ՌԴ-ՉԺՀ ԵՌԱՆԿՅԱՆ ՆԵՐՍՈՒՄ

ԳԱՐԻԿ ՔԵՌՅԱՆ

ԽՍՀՄ փլուզումից և երկբևեռ աշխարհակարգի վերացումից հետո, արդեն մի երեք տասնամյակից էլ ավելի համաշխարհային գործընթացների վրա ազդելու և ուղղորդելու լուրջ լծակներ է ձեռք բերել Չինաստանը, որի տնտեսական ներուժը համեմատելի է թերևս միայն ԱՄՆ-ի հետ: Եթե հնում բոլոր ճանապարհները տանում էին դեպի Հռոմ, ապա ներկայումս շատ բախտորոշ ճանապարհներ տանում են դեպի Պեկին: Ուկրաինական ճգնաժամի հանգուցալուծումն էլ շատերը ներկայումս կապում են Չինաստանի դիրքորոշման հետ, որովհետև միայն նա կարող է նվազեցնել Ռուսաստանի նկատմամբ կիրառվող և նախադեպը չունեցող պատժամիջոցների ծանր բեռը: Միաժամանակ արդի գլոբալացվող աշխարհում տեղի է ունեցել բավականին յուրահատուկ գործընթաց, որի արդյունքում ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացները այնպես են միաձուլվել և միախառնվել, որ գրեթե անհնար է որոշել որտեղ է ավարտվում ներքաղաքականը և սկսվում արտաքին քաղաքականը: Ուստի պատահական չէ, որ քաղաքագիտական կենտրոններում միջազգային հարաբերություններ և միջազգային քաղաքականություն հասկացությունները հաստատուն կերպով փոխարինվել են համաշխարհային քաղաքականություն եզրույթով, որն իր մեջ ներառում է ներքաղաքական և արտաքին քաղաքական գործընթացների միաձուլված ամբողջութ-

յունը: Այս համատեքստում է նաև մեզ վերաբերվող ղարաբաղյան հակամարտությունը, որն անշուշտ չի կարող լինել Ադրբեջանի ներքին գործը: Սակայն վերը նշված իրողության դասական օրինակը Թայվանի խնդիրն է: Այս օրինակը ապացույցն է ներքաղաքական հակամարտության երկարատև կերպափոխման: Այն նաև Չինաստան և Թայվանի 70-ամյա թշնամանքի պատմություն է, որի խորքային պատկերացումները կարևոր են նաև Հայաստանի արտաքին քաղաքականության որոշ ճշգրտումների և միջազգային ատյաններում ճիշտ դիրքորոշումների մշակման համար: Թեման առավել քան հրատապ է, որովհետև ԱՄՆ Ներկայացուցիչների պալատի խոսնակ Նենսի Փելոսիի և նրան հաջորդած այլ ամերիկյան պաշտոնյաների այցը Թայվան հանգեցրել է Չինաստանի և Թայվանի ու նրանց դաշնակիցների միջև լարվածության նոր աճի: 2022թ. Օգոստոսի 28-ին ամերիկյան ռազմանավերը ցուցադրաբար անցան Թայվանի նեղուցով: Անցումը բավականին դանդաղ ընթացքով էր և տևեց մոտ 14 ժամ, որի ընթացքում ՉԺՀ ռազմածովային ուժերը նեղուցում բերվել էին մարտական պատրաստվածության և նոր պատերազմից հինգ րոպե էր պակաս: Հաջորդ օրը եղավ տեղեկատվություն ռուսական զինված ուժերի կողմից հեռավորարևելյան լայնամասշտաբ զորավարժությունների անցկացման մասին, որն իհարկե արվում է ԱՄՆ-ի դեմ, չինական կողմի աջակցության համար: Իրադրությունն իսկապես վտանգավոր է և այս տարածաշրջանը նախկինում էլ բազմիցս եղել է պատերազմածին և կոնֆլիկտոգեն: Պատմությունից հիշենք, որ երկրորդ համաշխարհային պատերազմի առաջին օջախն առաջացել էր հեռավորարևելյան տարածաշրջանում, երբ 1931 թ. Ճապոնիան ներխուժեց Չինաստանի կազմի մեջ մտնող Մանջուրիա: Չինաստանի նման գերտերության կտրուկ արձագանքները հսկայածավալ զորավարժություններով և ամերիկյան նոր ռազմական մատակարարումները Թայվանին, անշուշտ նոր աշխարհակարգի փոփոխման իրողություններից են, որտեղ կան նաև ուկրաինական ճգնաժամի արձագանքներ:

Դե ֆակտո գոյություն ունեցող կղզի պետության՝ Թայվանի շուրջ բազմաշերտ և բազմակողմ հակամարտություն է ձևավորվել: Այն էվոլյուցիոն երկար ուղի է անցել: Թայվանի հակամարտության 70-ամյա պատ-

մությունը շատ բան է փոխել: Արևմտյան կենտրոններում հիմա շրջանառվում է այն կարծիքը, որ այսպիսի երկարաժամկետ օտարվածությունը մայր երկիր Չինաստանից և մշտական հակակրանքը, ի վերջո հանգեցրել է էթնիկ ինքնության նոր դրսևորումների: Խնդրով զբաղվող հետազոտողներ կան, որոնք աշխատել են թայվանական հասարակության մեջ և գրում են, որ Թայվանում շատերն իրենց առանձին ազգ են համարում: Իբր շատ թայվանցիներ, յոթանասուն տարվա բաժանումից հետո, սկսեցին իրենց համարել առանձին ժողովուրդ, իսկ իրենց կղզին առանձին երկիր, չնայած դեռ անկախություն չի հռչակվել: Թայվանական որոշ շրջանակներ նույնիսկ իրենց իշխանությունը համարում է ամբողջ հսկայական Չինաստանի օրինական իրավահաջորդը: Հակառակ դրան, Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը Թայվանը համարում է անջատված նահանգ, որը վաղ թե ուշ պետք է վերադառնա Չինաստան:

Պաշտոնական Պեկինի կարծիքով Թայվան կղզին պատմականորեն Չինաստանի անբաժան մասն է: Ըստ պատմական աղբյուրների՝ կղզին հայտնվել է չինական գրառումներում մ.թ. 239 թվականին, երբ չինացի կայսրը արշավախումբ ուղարկեց տարածքը ուսումնասիրելու համար. Այս փաստով Պեկինը արդարացնում է կղզու սեփականության իրավունքը: Համեմատաբար կարճ ժամանակահատվածում՝ 1624-1661 թվականներին, Թայվանը եղել է հոլանդական գաղութ, իսկ հետո՝ 1683-1895 թվականներին, եղել է չինական Ցին դինաստիայի վերահսկողության տակ: Միևնույն ժամանակ, 17-րդ դարում անկարգություններից և աղքատությունից փախչող մեծ թվով ներգաղթյալներ Չինաստանից եկան Թայվան: Նրանց ժառանգները ներկայումս կազմում են կղզու ամենամեծ ժողովրդագրական խումբը: 1895 թվականին, առաջին չին-ճապոնական պատերազմից հետո, Չինաստանի կայսերական կառավարությունը ստիպված եղավ Թայվանը զիջել Ճապոնիային: Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում պարտված Ճապոնիան հրաժարվեց Չինաստանից խլված տարածքի վերահսկողությունից: Չինաստանի Հանրապետությունը՝ որպես պատերազմում հաղթող պետություն, սկսեց կառավարել Թայվանը՝ իր դաշնակիցների՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համաձայնությամբ:

Ներկա հակամարտությունը ծնվեց 1949 թ., երբ քաղաքացիական չորս տարվա պատերազմի արդյունքում, որն ընթանում էր կառավարող Գոմինդան կուսակցության և կոմունիստների միջև, երկրում հաստատվեց կոմունիստական վարչակարգ Մաո Ցզե Դունի գլխավորությամբ: Պարտված գոմինդանական կառավարությունը և նրա կողմնակիցները, ընդհանուր առմամբ մոտ մեկուկես միլիոն մարդ, փախան Թայվան: Գոմինդանի առաջնորդ Չան Կայ Շին այնտեղ ստեղծեց վտարանդի կառավարություն, իրեն ենթակա տարածքը անվանեց Չինաստանի Հանրապետություն և կառավարեց այն հաջորդ 25 տարիներին: Մայրցամաքային չինացիները, ովքեր փախել էին կոմունիստական վարչակարգից երկար տարիներ գերիշխում էին Թայվանի քաղաքականության մեջ, թեև նրանք կազմում էին բնակչության ընդամենը 14%-ը:

Ո՞րն է Թայվանի թնջուկի էությունը: Իհարկե այն էթնոքաղաքական հակամարտություն չէ, դժվար է նաև այն համարել անջատողականության/սեպարատիզմի դրսևորում: Թերևս դեռ չկա միասնական քաղաքագիտական մոտեցում; Համաշխարհային ուժային կենտրոններում անընդհատ փոփոխվել են դիրքորոշումները այս հակամարտության նկատմամբ: Անհամաձայնություն և շփոթություն կա, թե ինչ է Թայվանը: Շատերը հակված են այն համարել չճանաչված պետություն: Կղզին, որի բնակչությունն անցնում է քսան միլիոնից, ունի իր սահմանադրությունը, ժողովրդավարական ճանապարհով ընտրված իշխանություն և շուրջ 300,000-անոց բանակ: Չան Կայ Շին, ով ժամանակին այնտեղ ստեղծեց վտարանդի կառավարություն, պնդում էր, որ իր կառավարությունը ներկայացնում է ողջ Չինաստանը և պատրաստվում էր նույնիսկ հետ նվաճել երկիրը:

Երկբևեռ աշխարհակարգում, սառը պատերազմի քաղաքականության տրամաբանությամբ, ԽՍՀՄ-ը և սոցիալիստական պետությունների իշխանությունները ճանաչում էին Պեկինի կոմունիստական կառավարությունը, իսկ կոլեկտիվ Արևմուտքը օրինական իշխանություն էր ճանաչում գոմինդանական կառավարությունը Թայվանում: Թայվանը նույնիսկ զբաղեցրեց Չինաստանի տեղը ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում, քանի որ շատ արևմտյան երկրներ նրան համարում էին Չինաստանի օրինական կառավարություն:

Այնուամենայնիվ, 1970-ականներին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշ անդամ պետություններ սկսեցին պնդել, որ Թայվանն այլևս չի կարող ներկայացնել մայրցամաքային Չինաստանում ապրող հարյուր միլիոնավոր մարդկանց: 1971 թվականին վերականգնվեց Պեկինի կոմունիստական կառավարության տեղը ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում, իսկ Թայվանի ներկայացուցիչները հեռացվեցին: 1978 թվականից, մեծ ռեֆորմատոր Դեն Սյաոպինի բարեփոխումների շնորհիվ Չինաստանը սկսեց բացել իր տնտեսությունը և դարձավ շուկայական տնտեսությամբ, բայց քաղաքական համակարգով կոմունիստական ավտորիտար պետություն: Այլ կերպ ասած իրականացավ չինական յուրահատուկ զարգացման ուղու մասին հայեցակարգը: Միացյալ Նահանգները, տնտեսական շահերից ելնելով, գիտակցելով առևտրի հնարավորությունները և հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը, պաշտոնապես՝ 1979 թ. դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Պեկինի կոմունիստական կառավարության հետ ։

Այդ ժամանակից ի վեր Թայվանը պաշտոնապես ճանաչող երկրների թիվը նվազել է՝ հասնելով մոտ 15-ի: Սպիտակ Տունը ամերիկա-թայվանական հարաբերությունների մակարդակը իջեցրեց միջպետական կարգավիճակից, ազդարարելով, որ պաշտպանում է միասնական Չինաստանի գաղափարը: Այժմ, չնայած անկախ պետության բոլոր հատկանիշներին և Չինաստանից տարբերվող քաղաքական համակարգին, Թայվանի իրավական կարգավիճակը մնում է անհասկանալի:

Թայվանական բազմաշերտ հակամարտության կերպափոխման գործընթացում մինչև օրս վճռորոշ նշանակություն ունի այն, թե ինչպե՞ս են այժմ հարաբերությունները Թայվանի և Չինաստանի միջև: 1980 թ.-ից Չինաստանի և Թայվանի միջև հարաբերությունները սկսեցին բարելավվել: Թայվանը նախ թուլացրեց Չինաստան այցելելու և ներդրումներ կատարելու արգելքները, իսկ 1991-ին հայտարարեց, որ պատերազմը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հետ ավարտված է: Չինաստանն առաջարկեց այսպես կոչված «մեկ երկիր, երկու համակարգ» տարբերակ, որով Պեկինը հավաստիացրեց, որ Թայվանը կպահպանի ինքնավարությունը, եթե համաձայնի վերամիավորմանը: Նույն խոստումներով

Պեկինը վերականգնեց Հոնկոնգը 1997-ին, և մինչև վերջերս պահում էր իր խոսքը, թեև հետո փորձում էր պարտադրել իր համակարգը ժողովրդավարական Հոնկոնգում:

Ելնելով այդ փորձից Թայվանը մերժել է առաջարկը, իսկ կառավարող Դեմոկրատական առաջադիմական կուսակցության լիդերները բացահայտորեն հանդես էին գալիս առանձին պետության ստեղծման օգտին: Ի պատասխան 2005 թ.ին Չինաստանը ընդունեց այսպես կոչված «հակառանձնացման օրենքը», որը թույլ էր տալիս Չինաստանին «ոչ խաղաղ միջոցներ» կիրառել Թայվանի դեմ, եթե նա փորձի անջատվել: Կարգավորման մի տարբերակ էլ հարաբերությունների շտկումն էր տնտեսական համաձայնագրերի միջոցով, սակայն 2016 թվականից իրավիճակը կրկին լարված է: 2018թ. Պեկինը ուժեղացրեց ճնշումը միջազգային ընկերությունների վրա՝ սպառնալով արգելել նրանց բիզնեսով զբաղվել Չինաստանում, եթե Թայվանը իրենց կայքերում չնշեն որպես Չինաստանի մաս: 2020 թ.-ից Պեկինին նյարդայնացնում է այն հանգամանքը, որ թայվանյան ընտրություններում միշտ հաղթում են անկախության կողմնակից քաղաքական ուժերը (քաղաքական դաշտը տնօրինում են Գոմինդան և Դեմոկրատական կուսակցությունները), որոնք իրենց քաղաքական դիրքորոշումները հիմնավորում են Հոնկոնգում հակակառավարական բողոքի ցույցերով: Այս ցույցերը վերամիավորման հակառակորդների ջրաղացին են ջուր լցնում:

Որքանո՞վ է կարևոր անկախությունը Թայվանի համար: Այս հարցի պատասխանը միանշանակ չէ: Թայվանական հասարակությունը դեռևս չի համակերպվում մայրցամաքային հայրենիք վերադառնալու մտքի հետ: Կարծիք կա, որ միավորումը կղզու համար բարենպաստ չի լինի ժողովրդավարության ապագայի իմաստով: Եթե Պեկինը և Թայբեյը չեն կարողանում համաձայնության գալ հիմնարար քաղաքական հարցի շուրջ, ապա հակառակ դրան, տնտեսության մեջ նրանց հարաբերություններն ընդլայնվել և ամրապնդվել են վերջին տասնամյակների ընթացքում: Ըստ Թայվանի պաշտոնական տվյալների՝ 1991 թվականից մինչև 2021 թվականի մայիսի վերջը Չինաստանում թայվանական ներդրումները կազմել են 193,5 միլիարդ դոլար: Միաժամանակ Թայվանում որոշ մարդիկ ան-

հանգստանում են, որ իրենց տնտեսությունն այժմ կախված է Չինաստանից: Մյուսները կարծում են, որ ավելի սերտ տնտեսական կապերը նվազեցնում են ՉԺՀ-ի կողմից հարձակման ենթարկվելու հավանականությունը: 2014 թվականին Չինաստանը և Թայվանը ստորագրեցին երկու երկրների միջև առևտրային համաձայնագիրը, որին հետևեց բողոքի շարժում: Շարժման անդամները՝ ուսանողներ և ակտիվիստներ, ժամանակավորապես գրավեցին Թայվանի խորհրդարանը՝ բողոքելով չինական ազդեցության հնարավոր աճի դեմ:

Թայվանի ներկայիս իշխող Դեմոկրատական առաջադիմական կուսակցությունը դեռ կողմ է կղզու անկախությանը, մինչդեռ Գոմինդանի լիդերները խոսում են միավորման մասին: Թայվանում անցկացված վերջին հարցումները ցույց են տալիս, որ հասարակությունը դեռ միակարծիք չէ: Թայվանցիների մեծամասնությունը դեռ միջանկյալ դիրքերում է անկախականների և միավորման կողմնակիցների միջև: Հետաքրքիր էր 2022 թվականի հունիսին անցկացված հարցումը: Այն ցույց է տվել, որ բնակիչների միայն 5,2%-ն է ցանկանում վաղաժամ անկախության հռչակումը և միայն 1,3%-ը, ընդհակառակը, կողմ է առաջին իսկ հնարավորության դեպքում միավորվել մայրցամաքային Չինաստանի հետ:

Տարածաշրջանում Վաշինգտոնի վաղեմի քաղաքականությունը ռազմավարական երկիմաստության օրինակ է. պաշտոնապես ԱՄՆ-ը հավատարիմ է «մեկ Չինաստանի» քաղաքականությանը՝ ճանաչելով միայն Պեկինին և դիվանագիտական հարաբերություններ ունի նրա հետ: Միաժամանակ ամերիկյան դիվանագիտությունը հմտորեն օգտագործում է թայվանական խաղաքարտը չին-կորեական-ճապոնական տարածաշրջանում: ԱՄՆ վերջին կառավարությունները դաշնակցային հարաբերություններ են պահպանում Թայվանի հետ, որն իրականում միջպետական մակարդակի է: Ջո Բայդենն էլ հայտարարել է, որ ԱՄՆ-ը կպաշտպանի Թայվանը Չինաստանի հարձակումից: Նենսի Փելոսիի այցը Թայվան, կարծես դրա ապացույցն էր:

Մոտակա ամիսներին նոր զարգացումները այս տարածաշրջանում և Թայվանի խնդրի արծարծումները հաստատ կապված են այն բանի հետ, որ ԱՄՆ-ն Չինաստանի հանդեպ խորը դժգոհություն ունի ՌԴ

նկատմամբ պատժամիջոցներին չմիանալու համար: Եթե Սին Ծինպինը տեղի տար Բայդենի հորդորներին ու զգուշացումներին և միանար պատժամիջոցներին, իրադարձություններն այլ ընթացք կունենային: Նենսի Փելոսին էլ հաստատ Թայվան չէր գնա: Այնպես որ, իրական քաղաքականության մեջ արժեհամակարգն այլևս տեղ չունի, ամեն ինչի տակ թաքնված են մերկ շահերը, մնացյալը քարոզչություն է կտեղեկատվական պատերազմի արդյունք:

Նյարդերի պատերազմը ինչով կավարտվի. Բոլոր ճանապարհները տանում են Պեկին. Ինչ նոր զարգացումներ եղան, որոնք մեծ նշանակություն ունեն գլոբալ քաղաքական զարգացումների համար: Հիշենք, որ ուկրաինական իրադարձություններից առաջ Պուտինը Պեկինում բանակցում էր Սի Ծինպին հետ: Վերլուծաբանների մեծ մասը կանխատեսում էր որ երկու լիդերները փոխհամաձայնության են եկել. Չինաստանը կմեղմացնի պատժամիջոցների բեռը, իսկ Ռուսաստանը վճռականորեն կնպաստի Թայվանի հարցի հանգուցալուծմանը:

Սկզբնական շրջանում կարծես թե այս կանխատեսումը իրականանում էր: Պեկինը չմիացավ պատժամիջոցներին, մեծացրեց ռուսական էներգակիրների գնման ծավալները և հետաքրքրված էր Ռուսաստանից հեռացող արևմտյան ընկերությունների տեղը զբաղեցնելու հնարավորություններով: Սակայն աստիճանաբար Բայդենի վարչակազմին կարծես թե հաջողվել է դանդաղեցնել ամերիկյան շահերի համար վտանգավոր ռուս-չինական մերձեցման տեմպերը: Չինական դիվանագիտությունն էլ փայլում է իր զգուշավորությամբ և պրագմատիզմով: ԱՄՆ և ՌԴ համաշխարհային ռազմաքաղաքական հեգեմոնիայի թուլացումը արդեն հիսուն տարուց էլ ավելի ՉԺՀ արտաքին քաղաքականության հանգուցային կոնցեպտներից է:

Ամերիկա-չինական բարձրաստիճան պաշտոնյաների վերջին հանդիպումները նշանավորվել են հայտարարություններով, ըստ որոնց Վաշինգտոնն ու Պեկինը առճակատումից խուսափելու պատրաստակամություն են հայտնել: Չինաստանը կոչ է անում կարգավորել հարաբերությունները ԱՄՆ-ի հետ եւ հրաժարվել Պեկինի գլոբալ զսպումից : Չինաստանի Կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի անդամ Յան Ցզեչին եւ ԱՄՆ-

ի նախագահի ազգային անվտանգության հարցերով օգնական Ջեյք Սալիվանը հանդիպման արդյունքներով տարածվել են ՉԺՀ-ի ԱԳՆ-ի հայտարարությունը: Բանակցությունները երկու կողմերն էլ անվանել են անկեղծ եւ արդյունավետ: Փոխադարձ վստահության ամրապնդման պայմանավորվածություն են ձեռք բերել նաեւ օրերս ԱՄՆ-ի և ՉԺՀ-ի պաշտպանության նախարարներ Լլոյդ Օսթինը և Վեյ Ֆենհեն: Հաշտեցման հայտարարությունները փոխել են Թայվանի շուրջ նյարդերի պատերազմը, որը երկու համաշխարհային տերությունների ուղղակի բախման սպառնալիք էր ստեղծել:

Իմ դիտարկումներով չինական կողմը ձգտում է իր համար առավելագույն օգուտներ քաղել, որի համար նպաստավոր պայմաններ է ստեղծել ուկրաինական ճգնաժամը և Արևմուտք-Ռուսաստան փոխհարաբերություններում նոր սառը պատերազմը: ԱՄՆ-ը եւ Չինաստանը դեռևս կարող են խուսափել նոր սառը պատերազմից և վերադառնալ փոխշահավետ համագործակցության: Այս մասին ասված է Յան Յզեչիի եւ Ջեյք Սալիվանի Լյուքսեմբուրգում կայացած բանակցությունների արդյունքներով Չինաստանի ԱԳՆ հայտարարության մեջ: Ի դեպ վերջին ամիսների ամերիկա-չինական հարաբերությունների բացահայտ առճակատման աստիճանի արագ նավազեցմանն են ձգտում և Վաշինգտանում և Պեկինում:

Անկախ ռուսական գործոնի ազդեցության չին-ամերիկյան հարաբերություններրը իհարկե կարող են, զարգանալ ինչ որ մի ժամանակահատվածում, եթե ԱՄՆ-ն դրական ընդունի Չինաստանի ռազմավարական ընկալումները, ճիշտ ընտրություն կատարի, աշխատի չինական կողմի հետ, գործնականում իրականացնի երկու պետությունների ղեկավարների ձեռք բերած համաձայնությունները և որ ամենակարևորն է երբեք չպաշտպանի "Թայվանի անկախությունը":

Մեկ այլ, ոչ պակաս կարևոր հանգամանք ևս: Ժողովրդավարության համաշխարհային բաստիոն ԱՄՆ-ը, որն հիմա դարձել է նաև ոչ ժողովրդավար երկրների դատավորը, ՉԺՀ քաղաքական համակարգը՝ կոմունիստական տատալիտար և ավտորիտար ռեժիմով միշտ էլ կատաղի քննադատության է ենթարկել: Ռեժիմների փոխման ամերիկյան արտաքին քաղաքականության ռազմավարությունը, որ մնում է օրակարգում և որի ի-

բականացման տեխնոլոգիաները սկսած գունավոր հեղափոխություններից, վերջացրած պատժամիջոցներով և հումանիտար ինտերվենցիաներով, միշտ էլ անհանգստացերել չին կոմունիստներին: Այժմ հարաբերությունների պարզեցման գործընթացում փորձ է արվում որոշակի երաշխիքներ ձեռք բերել նաև այս հարցում: Պատահական չէ, որ Չինաստանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի անդամը հիշեցրել է ԱՄՆ-ի նախագահ Ջո Բայդենի հայտարարություններն այն մասին, որ Վաշինգտոնը չի ձգտում "նոր սառը պատերազմի" սանձազերծմանը, մտադիր չէ ռազմական դաշինքների ուժեղացման ճանապարհով փորձել փոխել Չինաստանի համակարգը: Նաև շատ հետաքրքիր էր Սի Ծինպինի վերջին հրամաններից մեկը, որով նա թույլատրեց Չինաստանի բանակին իրականացնել նաև ոչ ռազմական գործողություններ: Սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ սրանով ուժեղացվում է բանակի դերակատարումը երկրի ներքաղաքական կայունության ապահովման գործում: Ինձ թվում է հասկանալի է, բանակը գործի կդրվի եթե դրսի աջակցությամբ զանգվածային հակահիշխանական շարժումներ հրահրվեն:

Չինաստանը բարձր է գնահատում Բայդենի հայտարարությունը, որովհետև բոլոր ուղղություններով Չինաստանի զսպման և ճնշման ամերիկյան գործելակերպը միշտ էլ խանգարել է տնտեսական ծավալման և չինական ազդեցության գոտիների մեծացմանը: Հիմա շատ հարմար ժամանակներ են որպեսզի Պեկինը կարողանա ,,զսպման,, քաղաքականությանը այլընտրանք առաջարկել. կառուցել չին-ամերիկյան հարաբերությունները երեք սկզբունքների՝ փոխադարձ հարգանքի, խաղաղ գոյակցության և փոխշահավետ համագործակցության հիման վրա: Եվ կարծես թե այս դիրքորոշումը դրական արդյունքներ է տալիս: Լյուքսեմբուրգյան հանդիպումից հետո մամալում եղած տեղեկատվության համաձայն փոխընբռնում է ստացվել, տարածաշրջանային և գլոբալ անվտանգության, ինչպես նաեւ ամերիկա-չինական հարաբերությունների հանգուցային հարցերի անկեղծ, առարկայական և արդյունավետ քննարկման արդյունքում: Իհարկե անկեղծությունը միջազգային քաղաքականության մեջ շատ հազվադեպ է կիրառվում և այստեղ դժվար չէ կռահել ով ում ինչ է խոստացել: Բացառված չէ նաև, որ մոտ ժամանակներում կայանա Բայ-

դեն-Սի Ցզինպին հանդիպումը: Պեկինն ու Վաշինգտոնը ձգտում են կառավարելի դարձնել մրցակցային/համագործակցային հարաբերությունները: Այս գործում նրանցից յուրաքանչյուրը իր նպատակներն ունի: Չինական կողմի համար առաջնայինը զսպման քաղաքականության չեզոքացումն է, ամերիկյան կողմի համար ամեն հնարավոր միջոցներով ռուս-չինական հարաբերությունների սառեցումը:

Այս նպատակներով արագ արդյունքների հասնելը այդքան էլ հեշտ չէ և ամեն ինչ չէ որ հնարավոր է: Օրինակ, պետքարտուղար Էնթոնի Բլինքենը և ՉԺՀ ԱԳՆ ղեկավար Վան Ին, հանդիպումից հետո մեղադրանքներ են հնչեցրել և հեռացել ձեռնունայն: Դրանից հետո ամերիկյան կողմը սպառնացել է շարունակել Չինաստանի դեմ պատժամիջոցների քաղաքականությունը: 2021 թվականի մարտին, Յան Ցզեչին եւ Ջեյք Սալիվանը առաջին անգամ հանդիպել են Անկորիջում (Ալյասկա), սակայն երկխոսություն սկսելու նրանց առաջին փորձը ձախողվել է: Հռոմում կայացած չին-ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների հանդիպումը շատ սառն էր ստացվել, իսկ մարտ ամսին էլ ԱՄՆ-ն վերջնագիր էր ներկայացրել Պեկինին՝ սպառնալով պատժել նրան Ռուսաստանի հետ համագործակցությունը չդադարեցնելու ցանկության համար: Դրանից հետո Չինաստանը հրաժարվել էր վերանայել Ուկրաինայի հակամարտության վերաբերյալ իր դիրքորոշումը և սկսել է դիվանագիտական հակագրոհ՝ ԱՄՆ-ից պահանջելով բացահայտել Ուկրաինայում նրանց բիոլաբորատորիաների մասին տեղեկատվությունը: Հիշեցնենք, որ Պեկինը Մոսկվայի հետ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում բազմիցս բարձրացրել է ԱՄՆ-ի բիոլաբորատորիաների հարցը և փորձել այն դարձնել միջազգային լայն քննարկման առարկա:

Չին-ամերիկյան ջերմացման ճանապարհին թերևս ամենացավոտը Թայվանի հարցն է, որը կողմերը չեն թաքցնում: Տարածքային ամբողջականության պաշտպանության հարցում Չինաստանի դիրքորոշումը պարզ է և անսասան: Ըստ պաշտոնական հրապարակված դիրքորոշման Չինաստանի վերամիավորմանը խոչընդոտող ցանկացած գործողություն կարժանանա հզոր հակահարվածի: Ինչպես հետևում է հայտարարություններից, հենց Թայվանական հարցն է այսօր կազմում չին-ամերիկ-

յան հարաբերությունների քաղաքական հիմքը, և եթե այն չկարգավորվի, ապա դա կարող է կործանարար հետևանքներ ունենալ Վաշինգտոնի եւ Պեկինի հարաբերությունների համար: Թայվանական թնջուկը վերջերս քննարկվել է նաև Սինգապուրում կայացած պաշտպանության նախարարների հանդիպմանը:

Պեկինն ազդարարել է իր պաշտոնական դիրքորոշումը նաև ուկրաինական հարցում: 2022թ. մարտին ՉԺՀ-ի ԱԳ նախարար Վան Ին ասել էր, որ Ուկրաինայի հակամարտությունը պետք է լուծել բանակցությունների միջոցով, իսկ դրա համար անհրաժեշտ է դադարեցնել "կրակի մեջ յուղ լցնելը": ՉԺՀ-ի նախագահ Սի Ծինպինը մտահոգություն է հայտնել Ուկրաինայի իրադրության կապակցությամբ, և առավելագույն զսպվածության կոչ է արել: Սակայն ԱՄՆ-ն համոզված է, որ Չինաստանն իր քայլերով հաստատում է, որ կանգնել է Ռուսաստանի կողմը: Չինաստանի իշխանություններն իրենց վարքագծով, հռետորաբանությամբ և գործողություններով" ցույց են տալիս, որ Ռուսաստանի կողմն են կանգնել Ուկրաինայի շուրջ ստեղծված իրավիճակում, հայտարարել է պետդեպարտամենտի մամուլի քարտուղար Նեդ Փրայսը: Նա "դատարկ" է անվանել Չինաստանի իշխանությունների հայտարարությունները Ուկրաինայի հարցում չեզոք դիրքորոշման մասին: Նրա կարծիքով ՝ ՉԺՀ-ն գործնականում չի պահպանում "չեզոքությունը" և հավատում է "ռուսական քարոզչությանը": Նա նաեւ համոզված է, որ Չինաստանը եւ Ռուսաստանը "շարունակում են խուսափել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամների իրենց պարտավորություններից": 2022թ. Հունիսի 15-ին ՉԺՀ-ի նախագահ Սի Ծինպինը Վլադիմիր Պուտինի հետ հեռախոսազրույցում հայտարարել է ինքնիշխանությանն ու անվտանգությանը վերաբերող հարցերում Ռուսաստանին աջակցելու պատրաստակամության մասին:

Վերջում հավելենք, որ ԱՄՆ-ՉԺՀ-ՌԴ հանելուկային եռանկյունին շատ արագ է փոփոխվում: Դժվար է հստակ կանխատեսել նրա կերպափոխման գործընթացների վերջնարդյունքները: Շատ կարճ ժամանակահատվածներում համագործակցությունը վերածվում է հակամարտության, առճակատումը՝ չեզոքության, իսկ հետո նորից վերականգնվում են հին հարաբերությունները: Օրինակ՝ 2023 թ. օգոստոսին Սաուդյան Արաբիա-

յում ուկրաինական պատերազմի ավարտին նպաստելու հարցով միջազգային մեծ խորհրդաժողով գումարվեց: Ռուսաստանը հրավիրված չէր, որովհետև քննարկվում էր Զելենսկու առաջարկած պլանը: Մինչ այդ նմանատիպ մի միջոցառման Պեկինը հրաժարվել էր մասնակցել: Սակայն ի զարմանս բոլորի չինական պատվիրակությունը մասնակցեց, որը հակառուսական հռտորաբանության հետևորդները լուրջ հաջողություն համարեցին: